

մար, որը չորացնելու և պահելու համար շինուած շէնքերն ու պահեստները ահագին, հարիւրաւոր սաժէններով տեղ են բռնում:

Եւ պէտք է նկատել, որ առհասարակ նրանք՝ գոնէ այստեղ, Կովկասեան ափերում, թուրքունի համար աւելի լաւ շէնքեր ու յարմարութիւններ ունին, քան սեփական իրանց համար: Նրանցից շատերի թուրքունի պահեստները—«մաղազաները»—իրանց տներից դեղեցիկ են և ցրտից ու խոնաւութիւնից շատ աւելի պաշտպանուած, քան իրանց տները: Այդ պահեստները սովորաբար տախտակաշէն են լինում, մինչդեռ իրանց տները ծուռումուռ, կլոր փայտից են շինուած, անտաշ ու ծակ-ծակ արաներով:

Խօսելով Կովկասեան ափերի կլիմայական պայմանների մասին, չի կարելի ասել, թէ հայերի բոլոր նստած տեղերը վատ են: Ոչ, այստեղ էլ են պաստաւում լեռնային ու հովասուն գեղեցիկ տեղեր, ուր ոչ միայն ջերմը քիչ է լինում, այլ և լեռնային, մաքուր ու առողջարար կլիմա ունին. ինչպէս օրինակ՝ Սուխումի շրջանում Ծէբէլդա, Չէրնօմօրի վիճակում՝ Ղօյթա և այլն: Բայց ընդհանրապէս ասելով, հայ գիւղերից շատերի գիրքը առողջապահական կողմից լաւ պայմանների մէջ չէ: Տեղ-տեղ համարեա ծովին հաւասար, ձորերում ու նեղ հովիտներում ցրուած, անտառների մէջ կորած, տեղ-տեղ էլ անտառապատ բլուրների ու լեռների լանջին, ծովից մօտաւորապէս մի $\frac{1}{4}$ վերտու կամ քիչ էլ աւելի բարձր և սովորաբար ծովահայեաց, համարեա բոլորն էլ ծովին են մտիկ տալիս:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ:

Մեզ մօտ, Կովկասում, համշէնցի հայերը նստած են գլխաւորապէս Սև ծովի Կովկասեան ափերում և մասամբ էլ նրանց մօտիկ տեղերում՝ Աուբանի վիճակում, Եկատէրինօղարի ու Մաչկօպի շրջակայքում և Խրիմի ափերում: Նրանց ամենամեծ բազմութիւնը, ինչպէս վերևն էլ ասեցի, կենտրօնացած է այսօր Սուխումի շրջանում, ուր նրանց թիւը հասնում է մօտ 900 տան և մի հազարի չափ էլ, մէն-

մենակ ապրող, անտնուր պանդուխտների: հայերը նստած են բացառապէս շրջանի երկու բաժիններում՝ Գուգաուտի ու Գոււմիստաչի: Նրանց ամենանշտնաւոր կենտրոնական գիւղերն են՝ Մճարա և Ծէբէլդա: Երկուսն էլ նախկին աբխազներից պարապուած գիւղերն են, որ հիմա ամբողջապէս համշէնցի հայերով են բնակեցնուած: Ամեն մէկը նրանցից 150 տնից աւելի բնակիչ ունի, եթէ այդ տեղերում ժամանակաւորապէս ապրող թիւրքահայերին էլ հաշուելու լինինք: Բացի իրանց մեծութիւնից ու բազմամարդութիւնից, այդ երկու գիւղերը ամբողջ շրջանում միակն են, որ հայերի սեփականութիւն են կազմում: Մճարան թէև պետական հող է, բայց իբրև համայնական սեփականութիւն տրուած է հայերին 117 տան անունով դեռ ևս 1880 թւի վերջերին, Աովկասի նախկին փոխարքայ Մեծ իշխան Միխայիլի օրերում: Իսկ Ծէբէլդան հայ գաղթականներն են գնել մասնաւոր կալուածատէրներից այս մօտիկ տարիներում: Ամբողջ գնած հողի տարածութիւնը հազար դեսիատնից աւելի է, իսկ մասնակցողները 40 տուն են: Այսպիսով ամբողջ շրջանում մօտ 900 տնից հողի կողմից մի քիչ ապահովուած՝ հազիւ մի 160 տուն կրլինին: Թէև նրանց ձեռքի հողն էլ մեծ բան չէ, բայց մի կերպ ապրում են իրանց համար. կալուածատէրերի ձեռքին գերի չեն: Մնացած հարիւրաւոր հայ տներ ցրուած ապրում են շրջանում, օտարապատկան, վարձով վերցրած հողերի վրայ, կազմելով փոքրիկ գիւղեր և խմբեր, որոնք երբեմն մեծանում, երբեմն էլ բոլորովին պարապոււում են: Ամբողջ Աովկասեան ամբողջ էլի ամենից աւելի միսթարական հանգամանքներում այդ շրջանի հայերն են, որոնք թէ մեզ և թէ հայրենական ամբողջին աւելի մօտիկ են, իրարից էլ ուրիշ տեղերի պէս ցրուած ու կտրուած չեն և նիւթապէս ու բարոյապէս համեմատաբար աւելի լաւ ու բարեկեցիկ վիճակի մէջ են:

Սուխումի շրջանից ինչքան հեռանում ենք դէպի հիւսիս, այնքան աւելի աչքի է ընկնում հայերի ցրուած ու անջատ ապրելը, նիւթական ու բարոյական անխնամ վիճակը: Չէրնօմորի ահագին վիճակում նրանց թիւը հազար տնից քիչ աւելի կը լինի, խմբուած լինելով գլխաւորապէս Ադլէրի, Սօչիի ու Չափշուկայի շրջականերում: Ամենից քիչ Ադլէրի կողմերն են մնում. ընդամէնը՝ 170 տուն: Մի սեփական գնուած կալուածք էլ այնտեղ ունին հայերը (Մճարա գիւղից), մօտ 1300 դեսեսատին տեղ: Մնացած հայերի կէսը Սօչիի կողմերն են, կէսը Չափշուկայի: Այս վերջին վիճակումն էլ (Չափշուկա), որի մի մասը կազմում է պաշտօնապէս յայտնի Աելիամինովեան շրջանը, կան 130-ի չափ հայ տներ, որոնք սեփական հող ունին կառավարութիւնից ստացած. նրանց կէսը միայն Չափշուկա կոչուած գիւղի հողի վրայ են, որ համշէնցի հայերի հիմնած առաջին գիւղն է Աովկասեան ամբողջում:

Ռուսները նրան անուանում են հայոց գիւղ (Армянская), թէև մի քանի տարի է՝ իրանցից էլ մի քանի տուն մնում են այդտեղ հայերի հետ խառը: Սօցիի հայ գիւղերի մի ծայրից մինչև Չափշուկայի վիճակի հայ գիւղերը՝ օրերով ճանապարհ կայ. հարիւրաւոր վերստեր է քաշում: Մի 4—5 հարիւր տուն էլ Անապայի, Եկատէրինօղարի, Մայկօսլի ու Խրիմի կողմերում կրլինին: Դրանց վիճակը ամենքից աւելի կորած ու անմխիթար է:

Այդքան հայերից միայն մի փոքր մասն է ռուսահպատակ. շատ մի 300 տուն. գոնէ այսօր Աովկասեան օփերում նրանց թիւը շատ չէ: Գուցէ թիւը քահայերին Աովկասի սահմաններից հեռացնելու վերաբերմամբ կայացած բարձրագոյն կարգադրութիւնից յետոյ՝ շատերը կաշխատեն ռուսահպատակութիւն ընդունելու, այդ չը գիտեմ: Այնքանը գիտեմ միայն, որ այսօր նրանց ամենամեծ մասը, հազարաւոր հայեր դեռ ևս մնում են թիւրքահպատակ, չուզենալով բոլորովին կտրուել, բաժանուել իրանց մայր-երկրից:

Այսպիսով Աովկասեան օփերում և նրանց մօտիկ տեղերում ապրող բոլոր համշէնցի հայերը ամենաշատը հազիւ մի 2500 տուն կը լինին. եթէ մի 2—3 հազար էլ մենակ, աշխատելու եկած, անտնւոր բանուորների թիւը գցենք, կը ստանանք մօտաւորապէս 15 հազար հոգի. ամենաշատը այդքան կը լինին. Աովկասում և Ռուսիայում ուրիշ ոչ մի տեղ (բացի չիշուած Խրիմի օփերից) համշէնցի հայեր չըկան: Բոլորը դրանք են և մէկ էլ՝ հայրենական օփերում մնացողները: Եթէ նրանց էլ սրանց չափ ընդունենք (Նիկօմիդիայի կողմերը գնացողների հետ միասին), կը ստանանք բոլոր համշէնցի կոչուած թիւրքահայերի թիւը՝ ընդամենը 30 հազար:

ՀԱՄԱԿԵՆՑԻ ՀԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ, ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ, ԶԳԵՍՏԸ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆԸ:

Տեսքով՝ Սև ծովի օփերի հայ գաղթականները չիշեցնում են մեզ մեր տեսած ու գիտցած թիւրքահայ հայրենակիցներին, թէև ընդհանրապէս սրանց կազմուածքի, շարժմունքի ու վարմունքի մէջ բաւական տարբերութիւն է նկատուում, համեմատելով սրանց Մշի, Վանի և առհասարակ հայաստանի դաշտային գիւղացիների հետ: Համշէնցի հայը, մանաւանդ անատօլիական օփերից նոր եկածը, իր շարժմունքների մէջ աւելի կրակ ու կենդանութիւն է ցոլացնում, քան այն տեղերից եկողները: Սա իր հայրենիքի լեռնային բնութեան համեմատ, իր շարժմունքներով ու ձևերով իսկական լեռնցու պատկերն է չիշե-